ՀԱՅՈՑ ՏՂԱԲԵՐՔԻ ԵՎ ՄԱՆԿԱՏԱՑՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԵԼԻՔՅԱՆ

Տղաբերքի և մանկատածության սովորույթների ու ծեսերի համակարգը համահայկական մշակույթի մի ուրույն, ինքնատիպ հատվածն է, որը յուրովի արտացոլում է էթնոսի մշակույթի ձևավորման ընթացքում ստեղծված էթնիկական, սոցիալ-իրավական, ամուսնա-ընտանեկան, աշխարհայացքային, բարոյագիտական և գեղագիտական պատկերացումները: Ուստի, դրա ուսումնասիրությունը շատ կարևոր է ինչպես պատմագիտության համար ընդհանրապես, այնպես էլ ընտանեկան կենցաղի ուսումնասիրման և, մասնավորապես, երեխայի սոցիալիզացիայի գործընթացի մի կարևոր հատվածի բացահայտման առումով:

Թեման համեմատաբար քիչ է ուսումնասիրված հայ պատմա-ազգագրական գրականության մեջ այն առումով, որ շատ քիչ շրջանների վերաբերյալ համահավաք նյութեր կան (Սյունիք, Սասուն), իսկ պրոբլեմին վերաբերող միակ ուսումնասիրությունը Ա.Լալայանի «Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ» հոդվածն է[1]: Որոշ նյութեր կան նաև «Ազգագրական հանդես»-ում, Խ. Սամվելյանի, Է. Կարապետյանի աշխատություններում[2]: Ավելի ամբողջական ու հետաքրքիր են Ատեփան Լիսիցյանի ու Վարգան Պետոյանի աշխատությունները, որոնցից առաջինում մանրամասն խոսվում է ամլության ժողովրդական բացատրությունների, գրանից խուսափելու եղանակների և, ընդհանրապես, մինչծննդյան շրջանի ծեսերի ու սովորույթների մասին, իսկ երկրորդում, ընդհակառակը, հետծննդյան փուլի սովորույթների մասին[3]:

Որպես կանոն, ուսումնասիրություններն սկսվում են արդեն պտղավորված կնոջ հետ կապված սովորույթների, ծեսերի ու հավատալիքների դիտարկումից և ավարտվում նորածնի առաջին քայլերն ուղեկցող ծեսերով ու արարողություններով: Ընդ որում, նյութերը դասակարգվում են գերադանցապես ժամանակագրական սկզբունքով կապված մանկան կենսաշրջանի հաջորդական փուլերի հետ (նախածննդյան, ծննդյան և հետծննդյան): Փաստորեն ուսումնասիրության շրջանակից դուրս է մնում հարցերի մի ամբողջ խումբ կապված նախամուսնական շրջանի, հարսանեկան և հետհարսանեկան փուլերի, ինչպես նաև մանկական խաղալիքների, դաստիարակության ժողովրդական եղանակների (մոտավորապես 1-ից

---

1 Ե ր. Լ ա լ ա յ ա ն. Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ.– «Տեղեկագիր» ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի. Երևան, 1931, N5:

2 Խ. Ս ա մ վ ե լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան. հ. 1, Երևան, 1931: Տե՛ս նաև «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գիրք1–26:

3 Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. Զանգեզուրի հայերը. Երևան, 1969: Վ. Պ ե տ ո յ ա ն. Սասունի ազգագրությունը. Երևան, 1965:

մինչև 3 տարեկան հասակի երեխաներին վերաբերող) մի փոքրիկ խմբի հետ:

Մեր հավաքած գաշտային-ազգագրական նյութերը հնարավորություն են ընձեռում ոչ միայն ընդլայնելու թեմայի շրջանակը՝ ընդգրկելով վերոհիշյալ հարցերը, այլև փորձելու գասակարգել դրանք դործառութատիպաբանական սկզբունքով, չբացառելով նաև դասակարգումն ըստ բնույթի, ինչպես նաև ժամանակագրական կտրվածքները, որոնք մեր ուսումնասիրության ներքին կառուցվածքի հիմքն են կազմում:

Տղաբերքի և մանկատածության սովորույթների ու ծեսերի առաջին խումբը վերաբերում է տղաբերքն ապահովելուն ուղղված ծեսերի ու սովորույթների համակարգին՝ կապված ընդհանրապես երեխայի ծննդի գիտակցման հետ: Սովորույթների այս համակարգը միտված է թե՛ իրական, թե՛ գերբնական միջոցներով ապահովելու կնոջ որդեծնությունը, որի հետ կապվել են հայ դերդաստանի երջանկությունը և հաջողակությունը: Այս համակարգի մեջ մտնում են՝ 1. ընդհանրապես պտղաբերության գաղափարը մարմնավորող ծեսերն ու սովորույթները, 2. ամուսինների արդասաբերությունն «ապահովելուն» ուղղված միջոցները, 3. ամլության ժողովրդական բացատրությունները ու այն բուժելու եղանակները, 4. պտղավորված կնոջ վարքագիծը կարգավորող ծեսերն ու սովորույթները, որոնք իբրև թե «ներգործում» են ապագա երեխայի առողջության ու արտաքին տեսքի, բնավորության ու ճակատագրի վրա, ինչպես նաև «ապահովում են» որդեծնության բարեհաջող ելքը:

Պտղաբերության դաղափարը մարմնավորող ծեսերն ու սովորույթներն անմիջականորեն վերաբերում են նախամուսնական շրջանին և յուրովի ձևակերպում արբունքի հասած աղջկա ու ընտանիքի կամ հասարակության փոխհարաբերությունները: Այս հարաբերությունների գլխավոր առանձնահատկությունը հասունացած աղջիկների մասնակի մեկուսացումն էր արտաքին աշխարհից՝ որոշակի կոնկրետ ժամանակահատվածներում և ընդհանրապես նրանց նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը: Այս ամենը կատարվում էր զանազան արգելքների, պաշտպանական-մոգական բնույթի ծեսերի ու սիմվոլիկ արարողությունների շնորհիվ, որոնք էլ կազմում էին վերոհիշյալ խումբ սովորույթների գլխավոր բովանդակությունը: Աղջկա հասունացման կապակցությամբ որևէ հատուկ ծես չէր կատարվում, պարզապես շրջազգեստի երկարությունը հասնում էր մինչև կրունկը («թոբուխը»)[4] և ավելանում էին դգեստի որոշ մանրամասներ: Մասնավորապես Ախալքալաքում տարազային համալիրին ավելանում էր դոգնոցը, որի խորհրդանշական բնույթը լավագույնս արտահայտվում է տեղական «դոգնոցը խելք կբերե» արտահայտությամբ[5]: Զանգեզուրում նորահաս օրիորդները ձախ ոտքին մետազյա բոժոժիկներով ապարանջան էին կրում՝ որպես չարխափան միջոց[6]: Որոշ շրջաններում ձախ ձեռքի մատնեմատին կարմիր թել էին կապում, որ խորհրդանշում էր աղջ-

4 Ս. Մ ե լ ի ք յ ա ն. Դաշտային ազգագրական նյութեր. Իջևան, 1981, (այսուհետև՝ ԴԱՆ և համապատասխան շրջանն ու տարեթիվը):

5 Ե ր. Լ ա լ ա յ ա ն. Տղաբերքի սովորությունների զարգացումը Հայոց մեջ, էջ 147:

6 Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. Զանգեզուրի հայերը, էջ 234:

կա սեռատարիքային նոր խմբի մեջ մտնելու հանգամանքը[7]: Բացի այս, կոնկրետ ժամանակահատվածներում նրանց նկատմամբ կիրառվում էին զանազան արգելքներ՝ կապված հաց թխելու, ճաշ եփելու, կաթը մայա բռնելու, մածուն մերելու և այլնի հետ, հիմնականում անձնական հիգիենայի հետ կապված սահմանափակումներ:

Սովորույթների մյուս հատվածը բնորոշ է հարսանեկան փուլին և անմիջականորեն կապվում է ամուսինների արգասավորությունն ապահովելու ու ամլությունից խուսափելու ժողովրդական միջոցների հետ: Սովորույթների այս խումբը դերաղանցապես մոգական բնույթ է կրում: Դրանցից է, մասնավորապես, հարսանիքի նախօրյակին դանակ կամ կողպեք փակել-բացելու սովորույթը՝ որպես խափանողական մոգության գրսևորում. վաղ առավոտյան, հարսանիքի մսացուն մորթելիս, ղուռնան փչելուն պես հարսանքատերը շտապում է առաջինն ինքը դանակը գնել եզան վրա, արյունոտել և փակել՝ հաջորդ գիշերը բանալու նպատակով[8]: Նոյեմբերյանի շրջանում դանակի (կողպեքի) փոխարեն հաճախ հանդուցում են կապովի ներքնազգեստի թելերը: Այս սովորույթն իր տարբերակներով ունի երկակի բնույթ. մի կողմից այն կարելի է դիտել որպես նմանողական մոգության վերապրուկ, մյուս կողմից այն հանդես է գալիս որպես խափանողական մոգության դրսևորում, որովհետև նպատակ ունի խափանելու ենթագրյալ թշնամու կողմից փակած ու չբացած դանակի (կողպեքի) հնարավոր չար ազդեցությունը, որն, ըստ ժողովրդական պատկերացման, տևում է մինչև քառասուն օր (քառասունք):

Տարածված է նաև հարսանիքի ժամանակ, առաջին անգամ փեսացուի տունը մտնելիս նորահարսի գիրկը տղա երեխա դնելու սովորույթը: Ընդ որում, նորահարսը պարտավոր է երեխային նվիրել իր ձեռքով կարած քսակը՝ խնձորով, չամիչով, ընկույզով լի, և մի զույգ նախշազարդ գուլպա: Ծիսական այս գործողությունը նպատակ ունի նմանողական մոգության սկզբունքով ապահովելու ապագա երեխայի ծնունդը, ինչպես նաև՝ սեռը:

Կան նաև հույժ խորհրդանշական ծեսեր, որոնցից մեկը նորապսակների սենյակում մրգերով զարդարված ծիսական շրջանի («փոփխ») տեղադրումն է[9]: Կիրառվում է նաև նորահարսին հագցնելիս քավորի կողմից նրա գոտին կապելու սովորույթը, որտեղ գոտին հանդես է գալիս որպես ուժի փոխանցման և բեղմնավորության խորհրդանիշ:

Սովորույթների վերջին խումբը վերաբերում է հետամուսնական շրջանին և անմիջականորեն կապվում է ամլության ժողովրդական ըմբռնումների և այն բուժելու եղանակների հետ: Ամլությունը հայ կնոջ ամենամեծ պատիժն է համարվել: Ոչ միայն ամուլ կինը, այլև ընդհանրապես երեխա չունեցող ընտանիքը չէր կարող հասարակության մեջ արժանի գիրք ունենալ: Ամուլ կինը չէր կարող նստել նորահարսի կամ հղի կնոջ կողքին, այցելել հարազատի նորածին երեխային: Նրա ամուսինը չէր կարող որևէ խնջույքում հեղինակավոր տեղ գրավել, ընտանիքի քավոր լի-

7 Ե ր. Լ ա լ ա յ ա ն. Ախալքալաքի հայերը.– ԱՀ, գիրք Ա, Շուշի, 1896, էջ 29:
8 ԴԱՆ, Իջևան, 1981:
9 ԴԱՆ, Նոյեմբերյան, 1983:

նել: Նրանք ամենուը հասարակության պարսավանքին էին արժանանում ինչպես քողարկված (ծաղրի, խղճահարանքի), այնպես էլ բացահայտ նրանց նկատմամբ կիրառվող արգելքների ու սահմանափակումների ձևով:

Երբեմն երեխա չունենալու մեջ «մեղավոր» էր ոչ թե կինը, այլ ամուսինը: Այդ մասին առաջինն իմանում էր տատմերը, որը հատուկ փորձով ստուգելուց հետո, կնոջը խորհուրդ էր տալիս «փոխել բարձը»[10], որպեսզի ընտանիքը չքայքայվի: Բարձափոխությունը, որը կատարվում էր որևէ համագյուղացու հետ, խիստ գաղտնի էր պահվում (տատմորից բացի, այդ մասին իմանում էր միայն սկեսուրը), թեև, ի վերջո, շատերն էին իմանում այդ մասին: Հետևապես, երեխա չունեցող ընտանիքները ավելի նպատակահարմար էին գանում որդեգրել տեղոր, եղբոր կամ քրոջ երեխային:

Ավելի հաճախ ամուլ կանայք գիմում էին սրբերի օգնությանը, ուխտադնացության, անցնում էին ծակ քարերի միջով, սրբաղան ծառից ճոճ էին կապում, կեղծ բարուր գնում մեջը և օրորում, թուղթ ու գիր էին անել տալիս ու կարում իրենց ղդեստին, պատարագի ժամանակ դրամը կիսալուսնաձև կտրել էին տալիս քահանային և կախում վզից: Այս կարգի սովորությունները, ինչպես տեսնում ենք, կրում են գերազանցապես հավատալիքային բնույթ:

Հետաքրքիր է, որ, այսուհանդերձ, հղիության առաջին նշաններն աշխատում էին թաքցնել. այդ մասին սկզբնապես ոչ ոք չէը իմանում, բացի ամուսնուց: Հղիությունը թաքցնելը և հատկապես այդ շրջանում մեծահասակների աչքին չերևալը խիստ կանոն էր դարձել ամբողջ Հայաստանում: Ըստ ժողովրդական պատկերացումների, հղի կնոջն սպառնում էր չար ոգին, որը մազի փոխարկվելով կարող էր մտնել նրա մեջ, դուրս քաշել լյարդը և ուտել, ինչպես նաև «չար աչքը», որից պաշտպանվելու նպատակով զանազան հմայիլներ ու աչքուլունքներ էին կրում: Լայնորեն կիրառվում էին այնպիսի գործողություններ, որոնց նպատակն էր ապահովել ապագա երեխայի ֆիզիկական բարեմասնությունները: Դրանցից էին, օրինակ, գաղանի ձու գողանալու, այն կրակե արդուկի մեջ եփելու ու ուտելու սովորությը, որպեսզի երեխայի այտերը փոսիկով լինեն, տավարի փայծաղ ուտելու կամ մարմնի որևէ մասին այն պատահաբար հպելու սովորությը, որպեսզի երեխան խալով լինի կամ երկարավիզ փարչից ջուր խմելը, որպեսզի երեխան երկարավիզ լինի:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ սովորությները վկայում են հայերի մեջ ժամանակին ձևավորված ժողովրդական յուրօրինակ ճաշակի մասին: Այս իմաստով հետաքրքիր է նաև վատ մարդու առջև դուրս դալուց խուսափելու կամ ավանակ տեսնելիս անմիջապես ճանապարհը փոխելու հետ կապված սովորությը: Հավատում էին, որ եթե երեխան առաջին անգամ «խաղա» ավանակի (կամ վատ մարդու) առջև, ծնվելուց հետո նրան կնմանվի արտաքնապես կամ բնավորությամբ[11]:

Տղաբերքի սովորությների երկրորդ մեծ խումբն անմիջականորեն կապվում է որդեծնության պրոցեսի հետ: Այս խմբի մեջ մտնում են 1. որ-

10 ԴԱՆ, Շամշադին, 1984:
11 ԴԱՆ, Եղեգնաձոր, 1991:

դեծնության պրոցեսը հեշտացնող միջոցները, 2. ծննդկանին հովանավորող ուժերին սիրաշահելու և չար ուժերին հեռացնելու հետ կապված սովորությունները, 3. քառասունքի սովորությունը:

Ժողովրդական պատկերացմամբ, ծննդկանին հովանավորողներն էին չորեքմուա, ուրբաթմուտ և կիրակմուտ ոգիները, որոնք անպատճառ օգնում էին նրան դժվարին պահերին, եթե, իհարկե, նա սրբությամբ պահպանել էր նրանց պատվին պաս պահելու ավանդությունը նրանց «կիրակինները»:

Պահապան ոգիների կողքին, ըստ ժողովրդական պատկերացումների, կային նաև չար, հալածող ոգիներ «Հալը» և «Տուրը»[12]: Առաջինը մի չար կանացի ոգի էր, որ մազի փոխարկվելով մանում էր մարմնի մեջ և դուրս քաշում լյարդը, հոգին: Իսկ երկրորդը խփում էր անսպասելի, դերազանցապես չեմքից անցնելիս: Հենց այս չար ուժերին հեռացնելու, նրանց կողմից սպառնացող վտանգը չեզոքացնելու նպատակով էլ որդեծնությունն անմիջականորեն ուղեկցվում էր ծիսական մի շարք արարողություններով: Մասնավորապես այդպիսիք էին չարքերին մոլորեցնելու նպատակով, ծննդկանի գլխին տղամարդու փափախ դնելը, առաստաղից մետաղյա շղթա կախելը, ծննդկանի շուրջն ածուխով մոգական շրջանակ դծելը, գետնի մեջ քոռամեխ խրելը, հրացանից կրակելը և այլն[13]: Այս առումով ուշագրավ է նաև մինչև տատմոր օգնության հասնելը նախապես «թեթև ոտք ունեցող» որևէ մեկին տուն հրավիրելու սովորությունը, որպեսզի վերջինս ներս ու դուրս անի սենյակում դրանով իրրև թե նպաստելով ծննդի բարեհաջող ելքին:

Հարկ է նշել, որ որդեծնության ողջ ընթացքը կատարվում էր տան մեջ, օջախի կամ թոնրի մոտ, մի խուրձ չոր խոտի կամ ծղոտի վրա: Ծննդկանի դեմքն անպայման դարձած էր լինում դեպի արևելք, իսկ գիշերը նույն նպատակով ընտրվում էր տան արևելյան անկյունը կարպետներով առանձնացված: Ընդ որում, վերոհիշյալ անկյունում անպայման ցանում էին օջախի մոխրից, որպեսզի «օջախի հրեշտակներն էլ դան օգնելու»: Սա, անշուշտ, օջախի (կրակի) հինավուրց պաշտամունքի վերապրուկ է:

Հայերի մեջ սրբությամբ պահպանվում է նաև «քառասունքի» սովորությունը, ըստ որի հետծննդյան առաջին քառասուն օրը ծննդկանը «պիղծ» էր համարվում և մեկուսացվում էր: Նրա նկատմամբ սահմանվում էին որոշ արգելքներ կապված որոշակի աշխատանքներ կատարելու (խմոր հունցել, մածուն մերել, կով կթել), տան որոշ իրերին, հացին ձեռք տալու, ճաշ եփելու և այլնի հետ: Առանձնացվում էին նաև ափսեն, բաժակը, գդալը: Ուշագրավ է, որ տանից դուրս դալիս քառասունքի մեջ դանվող կինը հատկապես զգուշանում էր չեմքից անցնելիս: Ուստի, քառասունքի ընթացքում դռան վերևից թոնրի շիշ կամ դանակ էին կախում: Նույն նպատակով նորածնին չեմքից անցկացնելիս նախապես դուռը թակում էին, իսկ գիշերը բարուրի մեջ հացի կտոր էին դնում:

---

12 Ե ր. Լ ա լ ա յ ա ն. Զանգեզուր.– ԱՀ, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 56:
13 ԴԱՆ, Շամշադին, 1984:

Բացի վերը նշվածից, քառասունքի ընթացքում արգելվում էր երեխային ասանը մենակ թողնել, հատկապես քնած ժամանակ: Ուստի ներսուդուրս անելիս նրա բարձի տակ մետաղյա իր կամ օրորոցի մոտ ավել էին դնում: Ընդհանրապես քառասունքի ընթացքում, ինչպես մորը, այնպես էլ երեխային «պաշտպանելու» նպատակով նրանց գլխատակին և գլխավերևը բազմաթիվ չարխափան իրեր էին դնում դանակ, դաշույն, մկրատ, ասեղ, թոնրի շիշ, հացի կտոր, չորացրած խոզի դունչ («զռելակ», «տյուտյուլ»)[14]: Վերջինս կախում էին նորածնի օրորոցից: Որպես չարխափան միջոց օգտագործում էին նաև աչքուլունքներ, բոինջի (փոշնի) նախշած և յոթ տեղ աղոթած կուժ, կափարիչ («խուփ»), զանազան ուլունքներ, չորացրած կառի փուշ և այլն: Քառասունքը լրանալու հետ վերանում էր նաև նորածնի պահպանման համար անհանդստության զգացողությունը:

Տղաբերքի սովորույթների երրորդ մեծ խումբն անմիջականորեն կապվում է նորածնի հասարակական ճանաչման, նրա խնամքի ու դաստիարակության հետ: Այս խմբի սովորույթները ծիսականորեն ձևակերպում են նորածնի կյանքում կատարվող կարևոր իրադարձությունները: Նորածնի հասարակական ճանաչման հետ կապված սովորույթները («աչքալուսենք», «բարձ», «կնունք», «ադմահատիկ») համապատասխանում են մանկան կենսափուլի յուրաքանչյուր կարևորագույն պահին, իսկ դրանցում հասարակության այս կամ այն չափով անմիջական մասնակցությունը վկայում է երեխայի հասարակական լայն ճանաչումը: Այս առումով սովորույթների հիշյալ ենթախումբը կարծես հակադրվում է ծննդյան փուլի սովորույթներին, որոնցում, ընդհակառակը, պարզորոշ երևում է երեխային ամեն գնով հասարակությունից թաքցնելու միտումը:

«Աչքալուսենքի» սովորույթի համաձայն, տատմերը երեխայի լույս աշխարհ գալու մասին լուրն առաջինն է շտապում հայտնել տնեցիներին, որի համար նվեր էր ստանում: Որից հետո լուրը տարածվում էր ամենամոտ ազգականների ու հարևանների մեջ, որոնցից յուրաքանչյուրը, որպես կանոն, նվեր էր բաշխում առաջին լրաբերին, միևնույն ժամանակ պարտավորվելով փոխադարձաբար այցելել: Այնուհետև առաջին մեկ կամ երկու շաբաթվա ընթացքում վերջիններս հերթով այցելում էին մորն ու մանկանը, իրենց հետ բերելով ծննդկադավաթ («սեղան»), որը սովորաբար բաղկացած էր լինում խավիծից, խաչած հավից, հալվայից, մեղրից, մրգերից ու թխվածքից: Տանտերն ամեն անգամ հյուրասիրում էր այցելուներին, որի ժամանակ, օգտվելով առիթից, տատմերը երեխային դնում էր նրանցից յուրաքանչյուրի գիրկը և դրա դիմաց «պորտակտրեք» ստանում: Այս սովորույթների մեջ արտացոլվում է հասարակական այն համոզմունքը, թե նորածինը միայն իր ծնողներին չի պատկանում, այլ ամբողջ համայնքին:

Նորածնի կյանքի առաջին օրերի ամենամեծ ու հանդիսավոր իրադարձությունը մկրտության ծիսակատարությունն էր, որը ըստ ժողովրդական պատկերացումների, նպատակ ուներ չեզոքացնելու նորածնի նկատմամբ չար ուժերի հնարավոր ազդեցությունը: Երեխային կնքում էին մեկ կամ երկու շաբաթից, կիրակի կամ տոն օրերին: Ընդհանրապես աշխատում

14 ԴԱՆ, Իջևան, 1981:

էին շուտ կնքել, որպեսզի տունը շուտ մաքրագործվի («փարատվի»), ծննդկանը շուտ «հալալվի» ու դրած անի, և երեխային էլ «տուրը չխփի»: Մկրտության ողջ գործընթացը արվում էր տանը կամ եկեղեցում: Դրանում հատկապես մեծ դեր էր խաղում քավորը, որն ընտրվում էր տոհմական հատկանիշով:

Կնունքի օրը, նշանակված ժամին, բոլորը հավաքվում էին նորածնի տանը կամ եկեղեցում: Եկեղեցում կնքելիս երեխային այնտեղ էր տանում տատմերը կամ սկեսուրը, իսկ վերադարձին բերում էր քավորը: Եկեղեցում կնքում էին կնքավաղանում, իսկ տանը՝ օջախին գրված տաշտի մեջ: Լողացնելուց հետո քահանան մեռոնը քսում էր երեխայի ճակատին, շուրթերին, կրծքին և ձեռքի ափերին՝ եթե աղջիկ է կամ ներբաններին՝ եթե տղա է: Ապա կապում էր նարոտը («Նարիկ», «կրնրնչ-կարմիր թել»)[15], որի կարմիր դույնը խորհրդանշում էր կյանքի հավերժությունը, իսկ կանաչը՝ սերնդափոխությունը: Այնուհետև քահանան փաթաթում էր նրան կարմիր «սավանով» (քավորի նվերը) և դնում քավորի գիրկը: Այս պահին էլ կնքվում էր երեխայի անունը, որը որպես կանոն առաջարկում էին տան մեծերը: Ամբողջ Հայաստանում լայնորեն ընդունված է մահացած ազգականի անվամբ երեխային անվանակոչելու սովորությունը, որը, հավանաբար, կապվում է նախնիների պաշտամունքի հետ:

Ինչպես այս, այնպես էլ նորածնի քառասունքը լրանալու, ատամհատիկի ու տարեդարձի հետ կապված սովորություններն ու ծեսերը ընտանիքի մեջ երեխային ընդունելու, նրա մեծարման և հասարակությանը նրան ներկայացնելու հիմնական գործառույթն ունեն: Սովորաբար հավատում են, թե նորածինն ստանում է իր պորտը կտրող տատմոր բնավորությունը: Ժողովրդական պատկերացմամբ անմիջական կապ գոյություն ունի երեխայի երջանկության, ապագա մասնագիտության և պորտը կտրելու կամ դեն նետելու վայրի միջև: Այս առումով շատ տարածված է արծաթե դրամի կամ հացի կտորի վրա երեխայի պորտը կտրելու սովորությունը: Աղջկա ընկած պորտը նետում էին թախտի տակ, տան որևէ անկյուն, օջախի կամ ճախարակի մեջ, որպեսզի խոնարհ ու ամոթխած, երջանիկ ու շնորհաձեռն լինի: Իսկ տղայինը նետում էին մանրավաճառի կապոցի մեջ կամ խանութում, արհեստանոցում, տերտերի ու ուսուցչի հետևից, երբեմն էլ բաց դաշտում, որպեսզի հասարակության մեջ «մտնող-դուրս եկող լինի» կամ էլ՝ աղբանոցը, որպեսզի չան նման որոնոզ ու հետաքրքրասեր լինի: Այս առումով շատ հետաքրքիր է տղա երեխաներին չան քոթոթի հետ «խախալելու» սովորությունը:

Նորածնին օդին ընտելացնելու և կոփելու համար լայնորեն կիրառվում էր նրա մարմինն «աղելու» ավանդությունը, որը գործում էր Հայաստանի բոլոր շրջաններում, բացառությամբ համշենահայերի: Աղը ցանում էր տատմերը երեխայի փորին, վզին, թևատակերին, ոտքերին: Աղի մեջ երեխային պահում էին կես օր, այսինքն՝ եթե երեխան ծնվում էր առավոտյան՝ աղից հանում էին երեկոյան, իսկ եթե երեկոյան էր ծնվում, աղից հանում էին առավոտյան: Այս սովորության տարածման շրջանակը

15 ԴԱՆ, Շամշադին, 1984:

չատ ավելի լայն է, քան Հայաստանը, և ամենուր այն կապվում է նորածնի առողջության, նրան երջանիկ ապագա ապահովելու հետ:

Առողջության և կոփելու տեսակետից կարևոր միջոց էր լողացնելիս երեխայի մարմնի մերսումը, որի միջոցով ձգտում էին գեղեցկացնել հոնքերն ու ճակատը, զարգացնել վերջույթների մկանները: Մասնավորապես տատմերը կլոր շրջագծով տրորում էր երեխայի գագաթը, ապա բթամատով մերսում ճակատի, քթի, ծնոտի զանազան մասերը, բարձրացնում էր երեխայի քիմքը: Վերջում երեխայի ոտքերից բռնելով կախում էր գլխիվայր, թափահարում, որպեսզի սրունքներն ուղիղ լինեն և, հակառակը, գլուխն առնում ձեռքերի մեջ ու երեք անգամ թափահարելով վեր բարձրացնում: Այս վերջին գործողությունը հայտնի էր «էրկենվզիկ» անունով, որին նվիրված էին մի շարք ռիթմիկ խաղերգեր[16]: Ընդհանրապես նվազ և գանգաղաճ երեխային հաճախակի լողացնում էին թթխմորի ջրով: Եթե մարմնի հպվող մասերը կարմրում էին, վրան կաղնու ծառի թեփ էին ցանում: Եթե նորածինն անընդհատ փսխում էր, ենթադրում էին, որ կատիկն իջել է, ուստի տատմերը կամ գյուղական հեքիմը վարպետորեն սեղմելով երեխայի կոկորդից բթամատով բարձրացնում էր այն: Դժվարացած շնչառությունը նշան էր այն բանի, որ երեխայի կոկորդում «չոփ է մնացել»: Այս անդամ «չոփչին» հատուկ վարպետությամբ փչում էր երեխայի քթանցքից և բերանից դուրս թռցնում չոփը (խաղողի հատիկի թաղանթ, խնձորի կճեպ):

Նորածնի խնամքի ու դաստիարակության մեջ կարևոր դեր էր խաղում ճիշտ բարուրելու ձևը: Հատկապես հետևում էին, որ երեխայի դիրքը ուղիղ լինի, ոտքերն ու ձեռքերը՝ ձգված, մարմինն անշարժ: Գլուխը նույնպես կապում էին հատուկ ձևով, որպեսզի ապահովվի դագաթի կորությունը և վզի երկարությունը: Երեխային բարուրի մեջ պահում էին մեկ-երկու շաբաթ, որից հետո դնում էին օրորոցի մեջ: Տարածված էր օրորոցի երկու տիպ՝ «լծնավոր օրորոց» և «տափի ճոճ», որոնցից առաջինն իր ընդհանուր տեսքով հիշեցնում է կովկասյան օրորոցը, իսկ երկրորդն ավելի ցածր է, առանց լծի ու առանց «յաների» :

Մանկատածության հետ կապված սովորույթների մեջ առանձնանում է մի խումբ, որն ուղեկցում է նորածնի կյանքում կարևոր այնպիսի իրադարձությունների, ինչպիսիք են առաջին ատամի դուրս գալը, առաջին անդամ եղունգներն ու մազերը կտրելը, առաջին քայլն անելը: Առաջին կաթնատամի դուրս գալն իրենով նշանավորում էր հետծննդյան շրջանի բոլոր դժվարությունների հաղթահարումը՝ կապված չար ուժերին դիմագրավելու հետ: Ուստի, առաջինն այն նկատողին, ըստ ընդունված սովորույթի, որևէ նվեր էին տալիս: Որպես ծիսական կերակրատեսակ «կեզքահատիկ» էին անում. խաչում էին ցորենը, լորին, եգիպտացորենը, երբեմն շաքարի մանրուք, քիշմիշ կամ «լեպլեպու» ավելացնում, խառնում ու բաժանում էին հարևաններին, հարազատներին, լցնում երեխայի գլխին, որպեսզի նմանողական մոգության սկզբունքով նրա ատամները ևս մանրահատիկ լինեն[17]: Ժողովրդի մեջ լայնորեն տարածված էր այն

---

16 Վ. Բ դ ո յ ա ն. Հայ ժողովրդական խաղեր. հ. 3, Երևան, 1983, էջ 28:
17 ԴԱՆ, Նոյեմբերյան, 1983:

պատկերացումը, թե իբր երեխայի առաջին կտրած մազը գետնին գցել չի կարելի, այլապես ոտքի տակ կընկնի ու դլուխը մշտապես կցավի, ուստի այն խնամքով փաթաթում էին թղթի մեջ և թաքցնում պատի կամ որևէ քարի արանքում: Կար նաև այն մտավախությունը, թե որևէ մեկը կիմանա, կտանի և «թշնամություն» կանի[18]:

Մոտավորապես յոթ ամսից հետո երեխային սովորեցնում էին նստել, ապա՝ կանգնել ու քայլել, որոնց համար օդտագործում էին հատուկ հարմարանքներ («թնդիր» և «ճեռ»): Երեխաների աշխատանքային, բարոյական դաստիարակությունն սկսվում էր վաղ հասակից, նրա առաջին քայլերի հետ: Դրանով զբաղվում էին տան մեծերը: Երիտասարդ ամուսիններն ամաչում էին ծնողների ներկայությամբ, առավել ևս հասարակության մեջ դուրդուրել, սիրել երեխային: Նրանց դաստիարակությունն անմիջականորեն կապվում էր ծնողների առօրյա զբաղմունքների, գործնական կյանքի տարբեր ոլորտների հետ: Այդ դաստիարակության մեջ վճռական դեր ունեին նաև մանկական խաղերն ու խաղալիքները, որոնց միջոցով երեխաները շատ վաղ էին սկսում ճանաչել տարբեր աշխատանքային գործընթացները, դրանց հետ կապված փոքրիկ հմտությունները, երկրագործական ու տնայնագործական դործիքները: Վաղ հասակում որպես խաղալիք օդտագործվում էին դույնդույն կոճերը, ընկույզից, խխունջից շարված ուլունքները, խաթունի բներից պատրաստված չխկչխկանները, փայտե գդալները, բահերը, կտորից կարված տիկնիկները, գնդակները, խմորե մարդուկները և այլն: Աղջիկների համար հատկապես սիրելի էր «տիկին» կոչվող խաղալիքը, որով նրանք խաղում էին իրենց հիմնական խաղերից մեկը՝ «տիկնանուկին»:

Հատկապես վաղ մանկական տարիքի խաղերից շատերը հասարակական, ընտանեկան կենցաղի որևէ տեսարանի պարզ ընդօրինակումն էին: Համեմատաբար ավելի ուշ շրջանում խիստ առանձնանում էին տղա և աղջիկ երեխաների խաղերը՝ սահմանափակվելով նեղ-սեռային շրջանակներով: Աղջիկների ընդունված խաղերն էին՝ «տիկնանուկին», «տրպնուկին», «մոլլաբրին», իսկ տղաներինը՝ «ձի-ձին», «հարամոլլին», «լախտանուկին», «ճախանուկին», «դոնդանուկին», «ջջլախտին», «չիլգին» և այլն, որոնք դաստիարակում էին նրանց թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես[19]:

Ծնողների և երեխաների փոխհարաբերություններում առկա ներքին զսպվածությունն ու արտաքին խուսափողականությունն անհրաժեշտաբար թելադրում էին համակեցության որոշակի կանոնների դոյություն, որոնց պարտավոր էին հետևել հատկապես երեխաները: Ուստի, բարոյական դաստիարակության հիմնական գիծը երեխաներին վարք ու բարքի մշակված չափանիշներին ծանոթացնելն էր: Ուշադրավ է, որ վաղ հասակից արդեն տղա և աղջիկ երեխաների դաստիարակությունը տարվում էր տարբեր կերպ՝ աղջկա մեջ համեստ, խոնարհ, շնորհաձեռն տնային տնտեսուհու հատկանիշներ, տղայի մեջ՝ համարձակ, ավանդապահ և աշխատանքի նկատմամբ սեր մշակելու ուղղությամբ:

---

18 Ե ր. Լ ա լ ա յ ա ն. Համշենցի հայեր.– ԱՀ, գիրք Ե, Թիֆլիս, 1899, էջ 363:
19 ԴԱՆ, Իջևան, 1981:

Երեխաների դաստիարակության մեջ զգալի դեր էին կատարում նաև ժողովրդական տոներն ու գյուղական հարսանիքները, որոնց անմիջական մասնակիցներն էին նրանք:

Այսպիսով, կարելի է ասել, որ դարերի ընթացքում ձևավորված և ավանդութային դարձած դաստիարակության ժողովրդական համակարգը ծիսականորեն ձևակերպում և յուրովի նշանավորում էր անհատի կյանքի կարևորագույն իրադարձությունները՝ նրա ծնունդը և սոցիալիզացիայի առաջին աստիճանները: Մասնավորապես, այդ համակարգի մեջ մտնող սովորույթներն արտացոլում են մանկան զարգացման որոշակի փուլերը՝ ինչպես կենսաբանական, այնպես էլ հասարակական:

Բացի համահայկական գծերից, տղաբերքի և մանկատածության սովորույթների ու ծեսերի համակարգին բնորոշ են նաև տեղական (լոկալ) առանձնահատկությունները, որոնք բխում են հայ էթնոսի տվյալ պատմամշակութային մարզի ու ենթամարզի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման յուրահատուկ պայմաններից, որոնցում քիչ դեր չեն ունեցել նաև առաջավորասիական ու կովկասյան հարևան ժողովուրդների հետ համեմատաբար ընդարձակ միջէթնիկական կապերը:

Տղաբերքի և մանկատածության հետ կապված սովորույթների ու ծեսերի կարևոր առանձնահատկություններից է դրանց արխաիկ բնույթը: Դրանցում կարելի է գտնել մայրիրավական և հայրիրավական հասարակական հարաբերությունների, ինչպես նաև բնապաշտության բազմաթիվ վերապրուկներ: Այդպիսիք են, օրինակ, ծննդաբերության դժվարին պահերին ծննդկանի գլխին տղամարդու փափախ դնելու սովորույթը (չար ուժերին շփոթեցնելու նպատակով), առաստաղից տղամարդու գոտի կախելու, տղամարդու շապիկի քղանցքով ծննդկանին ջուր տալու սովորույթները, տղա երեխաների դերադնահատումն ընդհանրապես և այլն: Կամ, ասենք, նորահարսի՝ հայրական տուն «դարձ» գնալու սովորույթը, առաջին երեխայի բարուրաշորը կամ ընդհանրապես մանկարաժինքը պարտադիր հարսնամոր կողմից պատրաստվելը, «տատմեր» տերմինն ինքը:

Լինելով ընտանեկան կենցաղի կարևոր բաղկացուցիչ մասը, սովորույթների ու ծեսերի վերոհիշյալ համակարգն անմիջականորեն կապվում էր հասարակական կյանքի տարբեր կողմերի հետ: Վերջինս մասամբ արտահայտվում էր այն մասնակցության մեջ, որ ունենում էին ընտանեկան ծեսերում հարազատները, հարևանները, համագյուղացիները, ինչպես նաև տատմոր, քավորի և հասարակական այլ դեմքերի կատարած հատուկ դերի մեջ:

Դիտարկված սովորությունների ու ծեսերի հիմնական մասն իր հիմքում ռացիոնալ բնույթ ունի: Այդպիսիք են՝ հղիության շրջանում պահպանվող արգելքները, ծննդկանին օգնելու և որդեծնության դործընթացը հեշտացնելու հետ կապված ժողովրդական միջոցները, հետծննդյան շրջանում կիրառվող սահմանափակումները և այլն: Ուշագրավ են նորածնի խնամքին ու դաստիարակությանն առնչված բազում հմտությունները, մանկական որոշ հիվանդությունների բուժման իրական եղանակները և դրանցում բուսական ու կենդանական ծագման դեղամիջոցների օգտագործումը:

Այդ ամենով հանդերձ, առկա են հավատալիքային պատկերացումների դրսևորումները: Դրանք հիմնականում նմանողական, պաշտպանական, վնասաբեր, շփումնային և մասնակի մոգական բնույթի ծեսերն ու սովորույթներն են (դանակ կամ կողպեք փակել-բացելու, նորահարսի գիրկը երեխա դնելու, նորածնի բարձի տակ մետաղյա իրեր դնելու, օրորոցից չորացրած խոզի դունչ կախելու, երեխային ուրիշի զգեստով պահելու սովորույթները, «չկանգնող» երեխային թուրքի ծոցով անցկացնելու ծեսը, ընկած պորտը դեն նետելը և այլն): Կան նաև քրիստոնեական վերաիմաստավորում ստացած ծեսեր, որոնք սակայն, հանդես են դալիս հեթանոսական հավատալիքների զուգակցությամբ: Այդ են վկայում կնունքի ամբողջ արարողությունը, ծննդաբերությունից անմիջապես հետո տունը «փաբատելու» սովորույթը և այլն:

Բնույթով առանձնանում են նորածնի հասարակական ճանաչման հետ կապված սովորույթները՝ «աչքալուսենքի», «սեղան բերելու» (տեսակցության գալու), «կնունքի» (անվանակոչության), «ադմահատիկի», որոնք որոշ իմաստով անցումային շրջանին են վերաբերում, արտացոլում են երեխայի զարգացման որոշակի փուլերը և հիմնականում սոցիալ-կենցաղային բնույթ են կրում:

Մանկական կենսափուլի ծեսերն ու սովորույթները, չնայած որոշ առումով իրենց խիստ պահպանողականությանը, այնուամենայնիվ, ինչպես ժողովրդական մշակույթի ամեն մի երևույթ, ժամանակի ընթացքում փոփոխվում են: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում՝ XX դ. սկզբին դրանք կրել են որոշակի փոփոխություններ՝ առկա պատմական պայմաններին համապատասխան: Գյուղացիության շերտավորման աճը մեծապես ազդել է ծեսերի ու սովորույթների ինչպես կազմի, այնպես էլ բովանդակության վրա: Երեխայի ծննդյան հետ կապված միջոցառումները ավելի մեծ շուքով են անցկացվում ունևոր ընտանիքներում, ավելանում է մասնակիցների թիվը, փոխվում է կազմը, մեծ տեղ են բռնում գրամական նվիրատվությունները: Այժմ քավորին ընտրելիս հաշվի էին առնում ոչ միայն տոհմական հատկանիշը, այլև՝ սոցիալական գիրքն ու դործնական կապերը: Ունևոր ընտանիքներում երեխաների անունների ընտրության մեջ զգալի դեր էին խաղում այլ ժողովուրդների անձնանունները և այլն:

Տղաբերքի և մանկատածության հետ կապված սովորույթների փոխակերպումը արտահայտվում է նաև գրանցում սոցիալ-կենցաղային բնույթի տարրերի տեսակարար կշռի աճի և կրոնամոգական տարրերի կրճատման մեջ: Շատ մոգական ծեսեր, կորցնելով նախնական իմաստը՝ վերածվում են առողջության, հաջողության խորհրդանիշերի:

СИСТЕМАТИЗАЦИЯ АРМЯНСКИХ РОДИЛЬНЫХ ОБЫЧАЕВ И ОБРЯДОВ

СУСАННА МЕЛИКЯН

Резюме

В статье делается попытка обобщения и систематизации материалов относительно традиционных обычаев и обрядов родильного цикла, собранных автором в ходе полевых этнографических экспедиций в конце 1980-х – начале 1990-х гг. Многие обряды являлись выражением не только религиозных представлений, зачастую имеющих дохристианские корни, но и не были лишены определенной рациональной основы. В то же время они выполняли важную задачу межпоколенной передачи необходимой социальной информации.

SYSTEMATIZATION OF THE ARMENIAN MATERNITY CUSTOMS AND RITES

SUSANNA MELIKYAN

Summary

The attempt in the article is done to generalize and systematize the data concerning traditional customs and rites of a maternity cycle, collected by the author during field ethnographic expeditions at the end of 1980s – beginning of 1990s. Many rites were not only the expression of religious ideas frequently having pre-Christian roots, but also had some definite r a-tional foundation. At the same time they had important function in transmission of the necessary social information from one generation to another.